# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ «ԱՅԳ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՄԱԿՈՎ ԴԻՄԵԼ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ԽՆԴՐԵԼՈՎ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ՝ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔԻՆ, Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՏԳԱՄԸ ՈՒՂՂԵՑ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ.

**«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:**

**Ամենայն հայոց լույս հավատքի վեմ՝ հավերժական Ս. Էջմիածնեն, Մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան ավետիսով կողջունենք և կօրհնենք ի սփյուռս աշխարհի ապրող մեր հավատացյալ ժողովուրդը, աղոթելով, որ Աստված բոլորը պահե պահպանե անփորձ ու անխռով, սիրով, միաբան և առաքինի գործոց հաջողությամբ, հավատարիմ՝ իրենց նախնեաց հավատքին և Մայր Աթոռին և օրհնապահ ու շինարար քաղաքացիներ՝ զիրենք հյուրընկալող բարի երկիրներուն:**

**Աստվածառաք Արդարության Արեգակի լույսը թող ծագի խռովահույզ աշխարհի վրա: Խաղաղության և իրարու հանդեպ հաճության ոգին թող իջնե սրտերուն մեջ բոլոր մարդերուն և ժողովուրդներուն:**

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**26 դեկտեմբեր 1956**
**ԷՋՄԻԱԾԻՆ**